ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ս. Դեղոյան «31» Օգոստոս 2022 թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևան
մարզ

Մալաթիա-Սեբաստիա
համայնք

հ. 179 հիմնական դպրոցի IXա
ուսումնական հաստատության անվանումը, դասարանը

Ադամյան Յուրիկ Վիկտորի
դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

«2022 - 2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)*

IX^{ա} դասարանում սովորում է 20 աշակերտ՝ 9 աղջիկ, 11 տղա: Երեխաները համերաշխ են, աշխատասեր, ընկերասեր, աշխույժ: Գիտեն իրենց պարտականությունները, դպրոցի կարգապահական կանոնները: Դասարանում կան բարձր առաջադիմություն ունեցող և շնորհալի աշակերտներ: Աշակերտները ապահովված են դասագրքերով, ընտրված է ծնողխորհրդի կազմը և դասարանի ավագը:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնադաստիարակչական աշխատանքի կենտրոնում սովորողի անձի ձևավորումն է: Յուրաքանչյուր երեխա պետք է ունենա իր տեղն ու դերը հասարակության մեջ, բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքի շրջապատում տեղի ունեցող երևույթներին, զարգացնի ճանաչողական ակտիվությունը, գեղագիտական, բարոյական, մտավոր, ֆիզիկական դաստիարակությունը: Մեծ նշանակություն ունեն արտադասարանական աշխատանքները: Պետք է հաճախ կազմակերպել տարբեր թեմաներով զրույցներ, արշավներ, այցելություններ պատկերասրահ, թատրոն: Սերմանել հայրենասիրություն, հարգանք տարիքով մեծերի նկատմամբ, օգնել իրենցից փոքրերին և թույլերին: Ակտիվ մասնակցություն ունենալ շաբաթօրյակներին, միջոցառումներին:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակությունը բարդ գործընթաց է, որն ուղղված է աշակերտների հոգևոր զարգացմանը: Պետք է հաճախ խոսել մեր մշակույթի, գրականության և արվեստի մասին՝ աշակերտների մոտ արթնացնելով սեր հայ եկեղեցու, ազգային արժեքների նկատմամբ:

3.2 Գեղագիտական դաստիարակությունը միտված է ձևավորելու և զարգացնելու սովորողների գեղագիտական ճաշակը, բացահայտելու գեղեցիկը, բարին: Պետք է կազմակերպել գրքերի, ֆիլմերի քննարկումներ, էքսկուրսիաներ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը սովորողների մեջ սերմանում է սեր և հավատ հայրենիքի, նրա պատմության և մշակույթի նկատմամբ: Պետք է առաջնորդվել <<Հայրենիքը մենք ենք>> նշանաբանով:

3.4 Ֆիզիկական դաստիարակությունը մարդու բազմակողմանի, ներդաշնակ զարգացման կարևորագույն տարրն է: Պետք է առաջնորդվել << Առողջ մարմնում առողջ հոգի>> նշանաբանով: Կարևորել ֆիզիկական զարգացման և հոգևոր կապի նշանակությունը:

3.5 Աշխատանքային դաստիարակությունը սերտ փոխկապակցության մեջ է հոգևոր դաստիարակության հետ: Պետք է կարևորել աշխատանքի դերը, քանի որ աշխատանքի շնորհիվ են ստեղծվում արվեստի գործերը, հոգևոր արժեքները:

3.6 Բնապահպանական դաստիարակությունը սովորեցնում է սիրել բնության գեղեցկությունը, պահպանել մաքրություն և պատասխանատվություն կրել բնության հանդեպ: Յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի, որ ինքը բնության մի մասնիկն է:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Պետք է ամուր կապ ստեղծել դպրոցի և ընտանիքի միջև, մշտապես կապի մեջ լինել ծնողների հետ: Ծանոթանալ յուրաքանչյուր սովորողի ընտանեկան պայմաններին: Տեղյակ պահել ծնողներին երեխայի վարքագծի և առաջադիմության մասին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
01.09	Գիտելիքի օր	01.09	Դասղեկ
I շաբաթ	Հրավիրել ծնողական ժողով	07.09	Դասղեկ
II շաբաթ	Զրույց՝ «Կարգապահություն, աշակերտական կեցվածք»	14.09	Դասղեկ
III շաբաթ	Զրույց՝ «Ես և իմ դպրոցը»	21.09	Դասղեկ
IV շաբաթ	Զրույց՝ «Աշակերտի պատասխանատվությունն ու իրավունքները»	28.09	Դասղեկ
V շաբաթ	Զրույց՝ «Իմ ուսուցիրը»	05.10	Դասղեկ
VI շաբաթ	Զրույց՝ «Ինչպես ճիշտ օգտագործել ժամանակը»	1120.10-14.10	Դասղեկ
VII շաբաթ	Զրույց՝ «Ուզում եմ ամեն ինչ իմանալ»	19.10	Դասղեկ
VIII շաբաթ	Զրույց՝ «Ընթերցանությունն իմ կյանքում»	02.11	Դասղեկ
IX շաբաթ	Զրույց՝ «Ինչպես անել , որ ինտերնետը օգտակար լինի իմ կյանքում»	09.11	Դասղեկ
X շաբաթ	Զրույց՝ «Առողջ ապրելու գաղտնիքը »	16.11	Դասղեկ
XI շաբաթ	Զրույց՝ «Խաղաղությունն ամենակարևոր բանն է »	23.11	Դասղեկ
XII շաբաթ	Զրույց՝ «Ես և բնությունը »	30.12	Դասղեկ
XIII շաբաթ	Զրույց՝ «Ինչպես եմ առաջադիմում »	07.12	Դասղեկ
XIV շաբաթ	Զրույց՝ «Ես և իմ դասարանը »	14.12	Դասղեկ
XV շաբաթ	Զրույց՝ «Իմ կոլեկտիվը »	21.12	Դասղեկ
XVI շաբաթ	I կիսամյակի արդյունքների ամփոփում	11.01	Դասղեկ
XVII շաբաթ	Զրույց՝ «Ինչպես կուզեի ապրել »	18.01	Դասղեկ
XVIII շաբաթ	Զրույց՝ «Ի՞նչ է բարոյականությունը »	25.01	Դասղեկ
XIX շաբաթ	Զրույց՝ «Իմ բանակը »	01.02	Դասղեկ

XX շաբաթ	Զրույց՝ «Իմ երկիրը »	08.02	Դասղեկ
XXI շաբաթ	Զրույց՝ «Ի՞նչ է պատասխանատվությունը »	15.02	Դասղեկ
XXII շաբաթ	Զրույց՝ «Իմ ազգային տոները՝ Տյառընդառաջ »	22.02	Դասղեկ
XXIII շաբաթ	Զրույց՝ «Իմ պահվածքը »	01.03	Դասղեկ
XXIV շաբաթ	Զրույց՝ «Դասարանի առաջադիմությունը »	08.03	Դասղեկ
XXV շաբաթ	Զրույց՝ «Գիրքն իմ կյանքում »	15.03	Դասղեկ
XXVI շաբաթ	Զրույց՝ «Ընտանիքը՝ որպես արժեհամակարգ »	22.03	Դասղեկ
XXVII շաբաթ	Զրույց՝ «Իմ իրավունքները »	05.04	Դասղեկ
XXVIII շաբաթ	Զրույց՝ «Կանանց տոների միամսյակը »	12.04	Դասղեկ
XXIX շաբաթ	Զրույց՝ «Հայոց եկեղեցու տաղավար տոները՝ Սուրբ զատիկ »	19.04	Դասղեկ
XXX շաբաթ	Զրույց՝ «Գարունը այնքան ծաղիկ է վառել… »	26.04	Դասղեկ
XXXI շաբաթ	Զրույց՝ «Մեծ եղեռն. Որ էլ չկրկնվի »	03.05	Դասղեկ
XXXII շաբաթ	Զրույց՝ «Մայիսի 1-ը՝ աշխատավորների օր »	10.05	Դասղեկ
XXXIII շաբաթ	Զրույց՝ «Մեր հաղթանակների մայիսը »	17.05	Դասղեկ
XXXIV շաբաթ	II կիսամյակի առաջադիմության ամփոփում	24.05	Դասղեկ